ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 4783

« 23 » հունիսի 2023թ.

«ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
«ԱԼՖԱ-ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Ստարտկոպի» ՍՊԸ

- դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) կազմակերպության գործունեության հասցեն թերի է լրացված,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 3-րդ նախադասության մեջ նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 1-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվությունը. անհրաժեշտ է «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերը փոխարինել «1) Ստարտկոպի ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Ստարտկոպի ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերով,
- դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (Հավելված N 1.3) բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը,
- հայտում բացակայում է (կցված չէ) մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը):

Ալֆա-Էտալոն ՍՊԸ

- հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթում (լիազորագրում) նշված է այլ գնման ընթացակարգի ծածկագիր և այլ գնման առարկա:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հունիսի 26-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ /+37410/ 511-774, 511-788